

Ամայա ՊՈՂՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՏԱՐՈՒ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍԱԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
(համաժամանակյա քննություն)**

Տարւոները լեզվի բառային կազմում կարևոր տեղ են գրավում, և դրանց իմաստային տարբերակման հիմքում առկա են բազմաթիվ լեզվական ու արտալեզվական գործոններ: Տարու բառերի դասակարգման սույն մոտեցումը հիմնված է “Oxford Advanced Learner’s Dictionary” բառարանի 7-րդ հրատարակության (2005) մեջ զետեղված 136 տարու միավորների ուսումնասիրության վրա: Արդյունքում տարբերակել ենք տարւոների իմաստաթեմատիկ տասներեք խումբ, որոնք արտացոլում են նաև այլ դասակարգողների կարծիքները, մոտեցումներն ու փաստական տվյալները: Ամբողջացնելով նշված մոտեցումները՝ փորձ ենք արել ոչ միայն ներկայացնել տարւոների դասակարգման մեր սեփական պատկերը, այլև ընդգծել տարւոների տարաբնույթ տարբերակումների սահմաններն ու կարևորությունը:

Բանալի բառեր. հանրալեզվաբանություն, բառապաշար, իմաստաթեմատիկ խումբ, տարու, ժարգոն, հայիոյանք, բառային կազմ, բառիմաստ, բառարան

Դեռևս 19-րդ դարից սկսած լեզվաբանները զբաղվել են բառապաշարի իմաստաթեմատիկ խմբերի ուսումնասիրությամբ: Նմանատիպ փորձեր առաջինը կատարել են պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչները: Հնդեվրոպական լեզուներն ուսումնասիրելիս վերականգնվել է նախալեզվի ու դրանից սերված ցեղակից լեզուների բառապաշարի իմաստաթեմատիկ խմբերի մոտավոր պատկերը՝ նպատակ հետապնդելով դասակարգել հնդեվրոպական հիմք լեզվի հիմնական բառաֆոնդի ու բառային կազմի ծագումնաբանական տարաբնույթ առանձնահատկությունները, ցեղակից լեզուների ազգակցական կապերի մերձավորությունն ու հեռավորությունը, ժամանակի ընթացքում **տարամիտվող** (diverging) և **զուգամիտվող** (converging) զարգացումները:

Ընդհանուր լեզվաբանության մեջ տվյալ խնդրի և դրան առնչվող հարցադրումների վերաբերյալ կարևոր դիտարկումներ են պարունակում Ջ. Շմիդտի, Մ. Բարտոլիի և Է. Մակակի ուսումնասիրությունները /տե՛ս նաև Ջահուկյան, 1960: 504-507, 573-575, 1962: 62-75/: Հնդեվրոպաբանության մեջ լայնորեն քննարկվում է Կ.Դ. Բաքի /Buck, 1984/ բառամիավորների իմաստաթեմատիկ 22 խմբերի բաժանումը: Հետագայում,

ընդգծենք, Բաքի սկզբունքով և դրա մասնակի լրացումներով են Հր. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը կատարել հայերենի հնդեվրոպական բառաշերտի դասակարգումը /Աճառյան, 1940, Ջահուկյան, 1987/:

Բառապաշարի իմաստաթեմատիկ խմբերի առումով պատմահամեմատական և տիպաբանական լեզվաբանության ներկայացուցիչների ավանդը մեծ է 20-րդ դարի կառուցվածքային լեզվաբանության տեսական ու կիրառական ոլորտներում: Բառապաշարի տարբեր շերտերին նվիրված ուսումնասիրություններում ու դասակարգումներում նկարագրվում են բառամիավորների իմաստները, կառուցվածքը և արտահայտման յուրահատկությունները /Ջահուկյան, 1989/, որոնց արդյունքներն ամփոփվում են տարաբնույթ բառարաններում:

Բառապաշարային միավորների տրոհումն իմաստաթեմատիկ խմբերի շարունակվում է նաև մեր ժամանակներում: Ընդ որում, կարևորվում են ոչ միայն նախորդ լեզվաբանական ուղղությունների դասական, այլև նոր, արդի մոտեցումները, մեթոդներն ու ճանաչողական դրույթները: Ճանաչողության տեսանկյունից ուրվագծվում են ընտրված բառային որոշակի խմբերի գործառման դաշտերն ու իրացման հնարավորությունները: Ի դեպ, այս մոտեցմամբ բառաշերտերի ուսումնասիրությունն ու բառաշերտերի իմաստային բաշխվածությունն ու նկարագրությունն ավելի արդյունավետ են, իսկ բառամիավորների ընկալումը որպես օբյեկտիվ իրականության արտահայտման բազմազան և բազմաթիվ ձևեր՝ ավելի համակարգված:

Այսպիսով, սույն ուսումնասիրության մեջ կատարում ենք անգլերենի տաբու բառերի իմաստաթեմատիկ դասակարգում: Այս դասակարգումը կատարելիս հիմնվել ենք Oxford Advanced Learner's Dictionary /OALD, 2005/ բառարանի 7-րդ հրատարակությունից քարտագրած 138 բառային միավորների հետազոտության վրա: Ուսումնասիրվել են բառային խմբերի համապատասխանությունները, ընտրված միավորներն համեմատվել և ճշգրտվել են ըստ անգլերենի այլ հեղինակավոր բառարանների, ինչպիսիք են՝ Cambridge Advanced Learner's Dictionary, Merriam Webster Dictionary, Online Etymology Dictionary, Online Dictionary by Merriam-Webster: America's most-trusted online dictionary, Online Etymology Dictionary:

OALD բառարանը, որպես անգլերենի ամենաընդարձակ բառարան, ունի մեծ ու զգալի առավելություն այլ բառարանների հետ համեմատած. բազմաթիվ բառեր, որոնք սույն բառարանում ներկայացվում են որպես տաբու բառային միավորներ, այլ բառարաններում չեն արտահայտվում տաբու տարբերակմամբ և սահմանափակվում են «ժարգոն», «վիրավորական բառ» կամ «հայիոյանք» որակական բնութագրումներով: Անգլերեն տաբու բառերի մեր կողմից առանձնացված թեմատիկ խմբերում բառերի ներգրավումը պայմանավորված է դրանց հիմնական կամ մոտավոր իմաստներով, ինչպես նաև այլ առնչություններով:

Այսպիսով, յուրաքանչյուր լեզվում բառերը, ըստ ունեցած էական ու կարևոր հատկանիշների, խմբավորվում են որոշակի բառային խմբերում: Անգլերենի տեսական բառագիտության մեջ բառերը խմբավորելիս և բառերի տարաբնույթ բնութագրումները ներկայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք՝ բառերի բառային արժեքը և բառերի քերականական արժեքը /Ginzburg, et al., 1979: 72-73/:

Տարբեր լեզուների տաբու բառերի դասակարգումներով ու տաբուների լեզվաբանական արժեքով զբաղվել են հանրահայտ լեզվաբաններ ու հետազոտողներ Չ. Ֆրոյդը, Ռ. Բրաունին, Ք. Ալլանը, Ք. Բարիջը և ուրիշներ: Իհարկե, տաբուների ուսումնասիրության գործում ավանդ ունեցող այս և բազմաթիվ այլ հետազոտողների կատարած դասակարգումները, բնականաբար, միանման լինել չեն կարող: Ոլորտի տեսաբաններ Ք. Ալլանը և Ք. Բարիջը, կատարելով տաբուների ընդհանուր լեզվաբանական և հանրալեզվաբանական քննություն, տաբուների տարբերակման հիմքում կարևորում են բազմաթիվ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

1. մարդու մարմին և նրա հետ կապված գործառույթներ՝ քրտինք, արտաթորանք, սնունդ և այլն,
2. մարդու օրգաններ և սեռական ակտ, միզել, բնական կարիքներ հոգալ,
3. հիվանդություն, մահ և սպանություն (զարմանալի է, որ այս խմբում են ներառվել նաև որսորդությունն ու ձկնորսությունը),
4. անվանում, հասցեագրում, հուզմունք, մարդկանց դիպչել և նայել, սուրբ էակներ, առարկաներ և վայրեր,
5. սննդի հավաքում, պատրաստում և սպառում /Allan&Burridge, 2006: 2/:

Տաբուների տարբերակման հիմքում ընկած վերոնշյալ իմաստային գործոնները հաշվի առնելով՝ Կ. Ալլանը և Կ. Բարիջը /Allan&Burridge, 2006: 5-13/ տարբերակում են տաբուների իմաստաթեմատիկ հետևյալ խմբերը՝ մահվան հետ կապված տաբուներ (Fatal taboos), կեղտոտ/տհաճ/ անպատշաճ տաբուներ (Uncleanliness taboos), հասարակական նորմերի խախտման տաբուներ (Violating taboos), շահագործման տաբուներ (Exploiting taboos), ավելի թույլ տաբուներ (Less serious taboos), բացարձակ տաբուներ (Absolute taboos), վարքաձային տաբուներ (Taboos applied to behavior), գրաքննությանն ու գրաքննիչներին վերաբերող տաբուներ (Censorship and censor taboos): Ըստ ամենայնի, հետազոտողները ներկայացրել են այն լեզվական միավորները, որոնք բացարձակ տաբուներ են: Հայիոյանքներն ու հիշոցները, տարատեսակ ժարգոնային բառերը, վիրավորական բառերը նրանց դասակարգումներում տեղ չեն գտել: Հեղինակները դրանք դիտարկել են միայն որպես տաբուների հետ սերտ կապ, առնչություն ու որոշակի հարաբերություն ունեցող միավորներ:

Այսպիսի բառաշերտերը քննելիս յուրաքանչյուր հետազոտող, ինչպես փաստերն են ցույց տալիս, կարևորել է որոշակի մոտեցում, հետևաբար տաբու բառերի դիտարկման ընտրանքը տարբեր է և տարաբնույթ: Արդյունքում ընդգրկվել են տաբուների ոչ բոլոր խմբերը: Օրինակ, հետազոտող Գ. Բաժակովան Ավստրալիայի և Ամերիկայի բնիկների լեզվից քաղած տաբուներին նվիրված հետազոտության մեջ տաբուների տարբերակումը կատարելիս առաջնորդվել է տարածքային ու տեսակային չափանիշներով: Նա տարբերակել է արյան, մազերի, մահվան, ուտելիքի, մարդկանց (հարս, փեսա, ծննդկան, մարտիկ, մարդասպան, գերբնական ուժեր և այլն) որակային հատկանիշների մասին տաբուներ /Bajáková, 2013: 6-56/:

Մեկ այլ հետազոտող՝ չինացի Չումինգ Գաոն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է անգլերենի տաբու բառերի այնպիսի խմբերի, ինչպիսիք են՝ արտաթորանքը, մահը և հիվանդությունները, սեռական հարաբերությունները, հայիոյանքները /Gao, 2013: 2310-2314/: Հետազոտողների համար կարևոր է որևէ առանձին լեզվի տաբուների ուսումնասիրությունը, քանի որ այս դեպքում տաբուների տեսակների առանձնացումը համապատասխանեցվում է տվյալ լեզվի ընձեռած հնարավորություններին: Օրինակ՝ Աֆրիկայում գտնվող ԻԳԲՈ հանրույթի (IGBO society) լեզուն հետազոտած լեզվաբանները տարբերակում են այդ հանրույթին բնորոշ տաբուների այնպիսի տեսակներ, որոնք չեն համապատասխանում այլ լեզուներում ընդունելի տաբուների շարքին: Սրանով պայմանավորված՝ այդ տաբուների որոշ խմբեր ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված տաբուների խմբերի ու տեսակների հետ համարժեք չեն: Ներկայացված խմբերից կարելի է նշել հետևյալները. 1. լեզվի անպարկեշտ տաբուներ (taboo or obscene language), 2. հայհոյանք (blasphemy), 3. անպարկեշտություն (profanity), 4. վիրավորանք և արմատականություն (insults and radical slurs), 5. բացատրական-հուզական բառեր (expletives-emotional words), 6. վուլգար բառեր (vulgarisms), 7. անեծքներ (cursing), 8. ժարգոն (slang) /Fakuade, et al., 2014: 121-122/:

Տաբուների ուսումնասիրության պատմությունը ցույց է տալիս, որ տաբուների հատուկ դասակարգումներ չեն կատարվել. միայն տրվել է տաբու միավորների ընդհանուր բնութագիրը: Մինչդեռ բառապաշարի որոշակի խմբեր, ներառյալ տաբուները, անհրաժեշտ է ենթարկել որոշակի դասակարգման /Աղայան, 1987: 393-394/:

Յուրքանչյուր լեզվում բառերի տարբերակումը/դիֆերենցումը առանցքային նշանակություն ունի: Բառերի տաբուների վերածման լեզվական ու արտալեզվական ուղիները, ինչպես փաստերն են ցույց տալիս, տարբեր են, հետևաբար պատճառահետևանքային կապերի բացահայտումը և դասդասումը կարևոր է: Բառապաշարի մեջ մտնող բառերի որոշակի խմբեր, պայմանավորված իրենց գործածության առանձնահատկություններով, հիմնականում ենթարկվում են տարած-

քային, դասակարգային ու մասնագիտական խմբավորումների /Աղայան, 1987: 393-394/:

Մեր ուսումնասիրած լեզվաբանական տեսական աղբյուրների տվյալներն ի մի բերելով՝ նկատում ենք, որ տաբուների գործածության իմաստային դաշտերը գրեթե համապատասխանում են իրար: Հետազոտողներն հիմնականում տարբերակել են 1. **կրոնին**, 2. **կենդանանուններին**, 3. **ռասիզմին**, 4. **արտաթորանքին**, 5. **սեռական ակտին**, 6. **քաղաքականությանը**, 7. **մականուններին**, 8. **հումորին**, 9. **սեռային և տարիքային տարբերակումներին**, 10. **սոցիալական, դասակարգային, կոնտեքստային հարաբերություններին** վերաբերող տաբուներ: Այսինքն՝ վերոնշյալ տասը խմբերում ընդգրկված բառային բազմաթիվ միավորները համարվում են տաբուներ՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: Մեր կատարած դասակարգման մեջ տարբերակում ենք տաբուների 13 իմաստաթեմատիկ խումբ: Սա, բնականաբար, պատճառաբանվում է անհատական մոտեցմամբ, ինչպես նաև անգլերեն լեզվի յուրահատկությունների հաշվառմամբ: Մեր կատարած դասակարգման մեջ չկան կենդանանուններով, մականուններով արտահայտված և հումորին վերաբերող տաբուներ: Կենդանանուններով արտահայտված տաբուները չենք ներառել մեր դասակարգման մեջ, քանի որ դրանք վերաբերում են հնդեվրոպական լեզուների զարգացման ավելի վաղ փուլերին. այսօր դրանց կիրառությունը անգլերենին առանձնապես բնորոշ չէ և ներկայումս դրանք չեն ընկալվում որպես տաբուներ /Պոդոլյան, 2018: 47-48/: Հումորին վերաբերող տաբուներին ու մականուններով արտահայտված տաբուներին նույնպես չենք անդրադարձել¹, քանի որ համարում ենք, որ դրանք սովորական գործածություն ունեցող բառեր են, որոնք հիմնականում պայմանավորված են որոշակի իրադրություններով և իրավիճակներով: Այդուհանդերձ, մեր տարբերակած տաբուների խմբերը քանակապես ավելի շատ են, քան նախկին խմբերը, քանի որ տաբուների որոշ խմբեր հիմնավոր պատճառներով առանձնացրել ենք, ինչպես նաև ավելացրել ենք իմաստաթեմատիկ նոր խմբեր:

Սովորաբար լեզվաբանության մեջ հայիոյանք և վիրավորանք պարունակող բառերի համատեղ քննության վերաբերյալ տեսակետները տարբեր են: Կան հետազոտողներ, որոնք դրանք միավորում են և քննում որպես լեզվական տաբուների մեկ առանձին խումբ /Jay, Janschewitz, 2008: 267-288/, մինչդեռ 21-րդ դարասկզբի լեզվաբանական գրականության մեջ դրանք հիմնականում ներկայացվում և քննվում են որպես լեզվական տաբուների երկու առանձին խումբ: Մ. Լյունգը տարբերակում է հայիոյաբանությունների հետևյալ տեսակները՝ հայիոյանքներ (cursing), անհարգալից բառեր (profanity), անարգանք արտահայտող բառեր (blasphemy), անպարկեշտ բառեր (obscenity), գոեհիկ բառեր (vulgarity) և մեղմասական հայիոյանքներ (euphemistic swearing)

/Ljung, 2011: 24-45/: Ք. Բ. Ֆագերսթենն իր ուսումնասիրության մեջ հիշատակում է նաև ամերիկացի լեզվաբան Ս. Ջ. Քեյսերի 1992 թվականին կատարած տարբերակումը, որը կիրառվող անբարո բառերի (dirty word) շարքում առանձնացնում է հետևյալ խմբերը՝ հայիոյանքներ (cursing), անհարգալից բառեր (profanity), անարգանք արտահայտող բառեր (blasphemy), արգելաբառեր (taboo), անպարկեշտ բառեր (obscenity), գռեհիկ բառեր (vulgarity), ժարգոն (slang), մակդիրներ (epithets), վիրավորանք արտահայտող բառեր (insults), տեղատարափ հիշոցներ կամ արտաթորանքագիտություն (slurs or scatology): Ֆագերսթենը կատարում է հետևյալ կարևոր դիտարկումը. «Այս տերմիններից յուրաքանչյուրը տարբեր կերպ է օգտագործվել գիտական հրատարակություններում: Նույնիսկ Ջեյը իր մյուս աշխատություններում տարբերակել է հայիոյանք (swearing) (2008), վիրավորական բառ (offensive words) (2009) և արգելաբառ (taboo words) (2009) տերմինները: Անվանումների այս կայուն տարբերակները գալիս են բնութագրելու հայիոյանքներն ուսումնասիրող հետազոտությունները՝ առաջ բերելով տերմինների զուգահեռ փոխգործածության միտում» /տե՛ս Fägersten, 2012: 3-4/:

Մենք նույնպես ճիշտ ենք համարում հայիոյանք և վիրավորանք պարունակող բառերի տարբերակումն ու առանձին քննությունը, քանի որ նախ՝ OALD բառարանում այդ բառերը ճշգրտորեն տարբերակված են, ապա՝ այդ բառերի առանձին քննությունն ավելի հստակորեն է բացահայտում դրանց իմաստային ու գործառական առանձնահատկությունները:

Սեռական ակտ պարունակող տաբուների խմբից զատել ու առանձին ենք ներկայացրել սեռական օրգաններ և այլ մարմնանուններ պարունակող տաբուները: Տարբերակել ենք «Տարաբնույթ որակական գործողություններ. ընթացք, շարժ», «Հատկանիշ, որակ, քանակ, մտավոր կարողություններ, նմանություն» իմաստաթեմատիկ խմբերը, քանի որ եղած դասակարգումներում այդ տաբուները բաշխվել են այլ տեսակների մեջ, որի արդյունքում էլ դրանց յուրահատուկ բնույթը չի կարևորվել: Տարբերակել ենք նաև «Վերացական հարաբերություններ», «Չարմանք, բացականչություն» խմբերը՝ հիմք ընդունելով անգլերենի ընձեռած լեզվական փաստերը:

Տաբու բառերն իմաստային առումով դասակարգային միավորներ են, և թեև հասարակության որոշակի շրջանակներում դրանց գործածությունը սահմանափակ է, դրանք իրենց ուրույն և կայուն տեղն են զբաղեցնում լեզվի բառային կազմում: Այնուամենայնիվ պետք է նշել, որ տաբուների գործածության կայունությունը խիստ հարաբերական է, քանի որ պայմանավորված է տաբու գործածողների նախընտրությամբ և կիրառության հաճախականությամբ:

Այսպիսով, մեր կատարած հետազոտության արդյունքում առանձնացրել ենք անգլերենի տաբու բառերի իմաստաթեմատիկ հետևյալ խմբերը.

ա) կրոնական տաբուներ. անգլերենն այնքան էլ հարուստ չէ կրոնական տաբու միավորներով: Ըստ մեր տվյալների՝ տարբերակվում են չորս բառային միավոր, որոնք առնչվում են Հռոմի Պապին և կաթոլիկությանը և չեն գործածվել անգլերենի զարգացման վաղ շրջաններում: Դրանք են՝ *fenian* (կաթոլիկ անձին ուղղված վիրավորական բառ, որը հիմնականում կիրառվում է Հյուսիսային Իռլանդիայում), *papist* (վիրավորական բառ, որը օգտագործվում է որոշ բողոքականների կողմից հռոմեական կաթոլիկների կամ նրանց կրոնի հետ կապված ինչ-որ բան նկարագրելու համար), *popery* (Հռոմի կաթոլիկությունը բնորոշող վիրավորական բառ), *popish* (օգտագործվում է Հռոմի կաթոլիկության հետ կապված ինչ-որ բան նկարագրելու համար): Այս տաբուների գործածությունն անգլերենում պատահական չէ, քանի որ անգլիացիները 16-րդ դարի վերջին արդեն առանձնացել էին կաթոլիկ եկեղեցուց և Հռոմից՝ դառնալով բողոքական /Dickens, 1992/: Բնականաբար Հռոմի Պապին և կաթոլիկությանն առնչվող որոշակի ներքին հակադրություններ գոյություն ունեին, որի հետևանքով էլ տաբուացվել են կաթոլիկ եկեղեցում կարևոր նշանակություն ունեցող բառ-հասկացությունները:

բ) ռասսայականությանը, ռասսիզմին և ազգային խտրականությանը վերաբերող տաբուներ. անգլերենը բավականին հարուստ է այս իմաստային խմբին պատկանող տաբուներով: Փաստերը ցույց են տալիս, որ այս իմաստաթեմատիկ խմբի պարզ և բաղադրյալ բառերը գործածություն են ստացել անգլերենի զարգացման միջին և ուշ շրջաններից սկսած: Ըստ ամենայնի, այս բառերի գործածությունը համընկնում է անգլերենի՝ որպես կազմավորված և զարգացող լեզվի ձևավորման հետ, երբ անգլերենը ոչ միայն գերիշխող լեզու էր, այլև սկսել էր ազդել այլ լեզուների վրա: Այս խմբի բառերը հիմնականում վերաբերում են այն ազգերին ու պետություններին, որոնք անգլերենի զարգացման միջին շրջանից սկսած գտնվել են Անգլիայի գերիշխանության ներքո, գաղութացվել են, եղել են անգլիացիների հպատակը, հետևաբար անգլիացիները կարող էին տաբուացնել այդ ազգերին վերաբերող բնութագրումները: Այստեղ, ըստ էության, մեծ դեր են կատարում իրար հակադրվող՝ հզորի և թույլի, մեծ և ազդեցիկ պետություն, քաղաքակրթություն ու մշակույթի ունեցողի և պետականություն և մշակույթ չունեցողի ըմբռնումները: Ներկայացնենք խտրականություն պարունակող բառային տաբուներ. *abo* (բնիկ ավստրալիական ռասսայի ներկայացուցիչ), *blackamoor* (սևամորթին ուղղված վիրավորական արտահայտություն), *coon* (վիրավորական բառ՝ ուղղված սևամաշկ մարդու), *darkie* (վիրավորական բառ՝ ուղղված սևա-

մորթ մարդու), *gook* (վիրավորական բառ՝ ուղղված հարավարևելյան Ասիայում ապրող անձի), *greaseball* (վիրավորական բառ՝ ուղղված հարավային Եվրոպայում կամ լատինական Ամերիկայում ապրող անձի), *half-breed* (վիրավորական բառ, որը նկարագրում է տարբեր ռասսաների պատկանող ծնողներից սերված անձի՝ ընդ որում ծնողներից մեկը սպիտակամորթ է, իսկ մյուսը՝ բնիկ ամերիկացի), *half-caste* (վիրավորական բառ, որն ուղղված է տարբեր ռասսաներ ներկայացնող ծնողներից սերված անձի), *Injun* (վիրավորական բառ՝ ուղղված բնիկ ամերիկացիներին), *jerry* (վիրավորական բառ՝ ուղղված գերմանացիներին. շրջանառության մեջ է դրվել առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին), *kaffir* (խիստ վիրավորական բառ՝ ուղղված սևամորթ աֆրիկացիներին), *kraut* (վիրավորական բառ՝ ուղղված գերմանացիներին), *mick* (վիրավորական բառ՝ ուղղված իռլանդացիներին), *nigger* (վիրավորական բառ՝ ուղղված սևամորթներին), *paki* (վիրավորական բառ՝ ուղղված պակիստանցիներին, հատկապես նրանց, ովքեր ապրում են Մեծ Բրիտանիայում. այս բառը հաճախ բնորոշում է նաև Հնդկաստանից ու Բանգլադեշից եկած մարդկանց), *polack* (վիրավորական բառ՝ ուղղված Լեհաստանից եկած կամ լեհական ծագում ունեցող մարդկանց), *red Indian* կամ *redskin* (վիրավորական բառ՝ ուղղված ամերիկացի բնիկներին), *spade* (վիրավորական բառ՝ ուղղված սևամորթներին), *spic* (խիստ վիրավորական բառ՝ ուղղված իսպանախոս անձի, օրինակ՝ մեքսիկացու կամ պուերտորիկացու), *wetback* (վիրավորական բառ՝ ուղղված մեքսիկացիներին, հատկապես նրանց, որոնք անօրինական ճանապարհով մուտք են գործել ԱՄՆ), *wog* (1. բրիտ. անգլ. խիստ վիրավորական բառ, որով բնորոշվում է սպիտակ մաշկ չունեցող անձը 2. ավստրլ. անգլ., վիրավորական բառ՝ ուղղված հարավեվրոպական ծագում ունեցող մարդկանց կամ նրանց, որոնց ծնողները եկել են հարավային Եվրոպայից), *yellow* (վիրավորական բառ՝ ուղղված արևելասիական որոշ երկրների քաղաքացիներին, ակնարկվում է նրանց շագանակագույն մաշկը), *yid* (խիստ վիրավորական բառ՝ ուղղված հրեաներին):

Ինչպես ցույց է տալիս ներկայացված բառաշերտը, ռասսիզմ արտահայտող տաբուները վերաբերում են սևամորթներին, ավստրալացիներին, գերմանացիներին, լեհերին, հրեաներին, իռլանդացիներին, ասիական մի շարք ազգերի ու պակիստանցիներին, ամերիկյան բնիկներին ու Ամերիկայում ապրող իսպանախոս ազգերին, մեքսիկացիներին, աֆրիկացիներին: Այս տաբուների գոյությունն ու գործածությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են մշակույթն ու քաղաքակրթությունը, պատերազմական իրավիճակները և քաղաքական հակամարտությունները, տարածքային ու աշխարհագրական առանձնահատկությունները, առևտուրն ու առևտրական կապերը, սոցիալական ու կենցաղային հարաբերությունները և, ի վերջո, ռասսիզմը:

գ) հայիոյանք արտահայտող տաբուներ. բառարանային աղբյուրներում սահմանափակ թվով անգլերեն հայիոյանքներ են հիշատակվում: Սա օրինաչափ է, քանի որ ժամանակի ընթացքում ձևավորված քաղաքավարական, քաղաքակրթական բարձր արժեհամակարգը չի խրախուսում այնպիսի բառաշերտերի հանրայնացումը, որը հակադաստիարակչական է, ազդում է մարդկանց բարոյական նկարագրի, վարքագծի ու կենսակերպի վրա: OALD բառարանը վկայակոչում է ընդամենը վեց այդպիսի միավոր՝ *bloody* (հայիոյանք, որ բազմաթիվ մարդիկ համարում են վիրավորական. այն օգտագործվում է ասվածի ազդեցությունը սաստկացնելու համար), *bugger* (օգտագործվում է որպես հայիոյանք, երբ մեկը նյարդայնանում է ինչ-որ բանից կամ ցույց է տալիս, որ բացարձակապես հետաքրքրված չէ ինչ-որ բանով), *fucking* (հայիոյանք, որն օգտագործվում է որևէ փաստի վերաբերյալ զայրույթը կամ դժգոհությունը արտահայտելու համար), *effing* (դրվում է միայն գոյականից առաջ, հայիոյանք, որը կիրառվում է որևէ մեկնաբանության կամ հայտարարության տհաճությունը ընդգծելու համար. ըստ էության, այն օգտագործվում է *fucking* բառի փոխարեն), *goddam* (հայիոյանք, որը ցույց է տալիս, որ այն օգտագործողը զայրացած ու նյարդայնացած է), *shit* (հայիոյանք, որը համարվում է խիստ վիրավորական. այն վկայում է, որ խոսողը զայրացած ու նյարդայնացած է): Աշխարհի և ոչ մի լեզու աչքի չի ընկնում հայիոյանքների առատությամբ, քանի որ դրանց գործածությունը, լինելով տաբու, ընդգրկում է սահմանափակ ոլորտներ և կապված է մարդկանց հոգևոր, նյութական գործունեության որոշակի իրավիճակների հետ: Հայիոյանքները, անպատշաճ բառերը լայն ճանաչում ունեն, և դրանց գործածությունը պայմանավորված է նախևառաջ որևէ իրավիճակում որոշակի մարդկանց վարքագծով:

Ընդհանուր առմամբ անգլերենի բառարանները սահմանափակ թվով հայիոյանք-տաբուներ են պարունակում, մինչդեռ կան հետազոտություններ, որոնցում առկա է այդպիսի բառերի մեծ քանակ: Այդպիսի բառերի հավաքածու է “Dirty Word Search Book for Adults” (2017) աշխատությունը՝ հիսունից ավելի անվայելուչ բառերի շարքով: Թեև այդ բառերը կիրառվում են հասարակության լայն շերտերի կողմից, սակայն, ինչպես արդեն նշել ենք, չեն ընդգրկվում բառարաններում անպատշաճ բովանդակության ու հակադաստիարակչական բնույթի պատճառով:

դ) վիրավորական տաբուներ. անգլերենը, ինչպես և ցանկացած այլ լեզու, հարուստ է այնպիսի բառամիավորներով, որոնք վիրավորական են և ատելություն կամ արհամարհանք են արտահայտում: Այդպիսի բառերը կապված են որոշակի իրադրությունների հետ և արտացոլում են մարդկային հարաբերություններ, մարդկային բնավորություն, հավանություններ, վարքագիծ, աշխարհայացք և այլն: Անգլերենում առկա են ընդամենը տասնյոթ այդպիսի տաբու միավոր՝ *bugger* (վիրավորական

բառ, հիմնականում ուղղված է տղամարդկանց, արտահայտում է զայրույթ և հակակրանք), *cocksucker* (բառ, որը հիմնականում օգտագործվում է տղամարդկանց վիրավորելու համար), *coolie* (արևելյան երկրներում առանց հատուկ հմտությունների կամ վերապատրաստման աշխատող մարդուն ուղղված վիրավորական բառ), *cunt* (հակակրանք արտահայտող վիրավորական բառ), *dyke* (վիրավորական բառ՝ ուղղված միասեռական կնոջը), *fag* (միասեռական տղամարդուն ուղղված արհամարհական բառ), *fuck all* (վիրավորական արտահայտություն, որն օգտագործվում է «ոչ ոք» կամ «ոչինչ» նշանակությամբ), *fucker* (կոպիտ բառ՝ խիստ վիրավորելու համար), *knocker* (կնոջ կրծքերին ուղղված վիրավորական բառ), *midget* (վիրավորական բառ՝ ուղղված ֆիզիկական խնդիրների պատճառով չափազանց փոքր, ցածրահասակ մարդուն, դուարֆիզմով հիվանդներին), *poof* (համասեռամուլներին ուղղված անպարկեշտ բառ), *prick* (հիմար կամ տհաճ մարդուն ուղղված վիրավորական բառ), *queer* (համասեռամուլներին, հատկապես տղամարդկանց բնորոշող վիրավորական բառ, որոշ համասեռականներ օգտագործում են բառը իրենք իրենց նկարագրելու համար), *cock-teaser* (վիրավորական բառ, որը բնորոշում է այն կնոջը, որը տպավորություն է ստեղծում, թե սեռական հարաբերություն կունենա տվյալ մարդու հետ, բայց իրականում նման մտադրություն չունի), *prick-teaser* (տե՛ս *cock-teaser*), *queen* (վիրավորական բառ իրեն կնոջ նման պահող տղամարդ համասեռականի համար), *retard* (վիրավորական բառ ոչ կիրթ կամ թերհաս մեկին նկարագրելու համար), *snatch* (վիրավորական բառ կանացի արտաքին սեռական օրգանների համար), *sod all* (տե՛ս *fuck all*), *twat* (հիմար մարդուն ուղղված տհաճ ու վիրավորական բառ), *whore* (վիրավորական բառ՝ ուղղված անբարոյական, տարբեր տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող կնոջը):

Ակնհայտ է, որ վիրավորական տաբուները ինչպես մենիմաստ, այնպես էլ բազմիմաստ բառեր են, որոնք ոչ միայն բառերի առաջնային իմաստներն են արտահայտում, այլև հիմնական, բուն իմաստից ածանցվող նոր իմաստների կրողներ են: Ըստ էության, այդ իմաստների զարգացման հիմքում ընկած է իրադրականությունը, պայմանականությունը:

Ինչպես նշել ենք, բազմաթիվ հետազոտողներ խախտում են հայհոյանքների և վիրավորական բառերի սահմանները, դրանք ներկայացնում միասնաբար, առանց որոշակի բաժանումների: Մենք, մեր դասակարգման մեջ հիմնվելով բառարանային տվյալների և ճշգրտված իմաստների վրա, դրանք ներկայացնում ենք առանձին-առանձին, որի շնորհիվ հայհոյանքների և վիրավորական բառերի իմաստագործական առանձնահատկությունների քննությունն ավելի ամբողջական է դառնում:

Ե) մարմնանուններին/սեռական օրգաններին վերաբերող տաբուներ. տաբուների այս խումբն ընդգրկում է բառերի որոշակի խումբ,

որոնք ուղղակի վերաբերում են տղամարդու և կնոջ սեռական օրգաններին, մարմնի որոշակի հատվածներին: Այն է՝ *arse/ass* (հետույք, նստատեղ), *arsehole/asshole* (հետանցք), *balls* (ամորձիներ), *beaver* (կնոջ մարմնի այն հատվածները, որոնք էրոտիկ են և սեքսուալ), *cock* (առնանդամ), *cunt* (կնոջ հեշտոցը և արտաքին սեռական օրգանները), *dick* (առնանդամ), *fanny* (կնոջ սեռական օրգանները), *knob* (առնանդամ), *minge* (կնոջ սեռական օրգանները կամ դրանց արտաքին մագերը), *prick* (առնանդամ), *pussy* (կնոջ սեռական օրգանները), *jug* (վիրավորական բառ ուղղված կանանց կրծքերին), *quim* (կնոջ սեռական օրգանները), *tit* (կնոջ կուրծք կամ պտուկ), *tool* (առնանդամ), *twat* (տհաճ կամ վիրավորական բառ՝ ուղղված կնոջ արտաքին սեռական օրգաններին): Նշված մարմնանունները տաբու են, քանի որ սեռական կյանքը և դրա հետ կապված ընկալողական, առարկայական մտապատկերները, էրոտիկ իրավիճակներն ու իրողությունները շարունակում են հրապարակման ենթակա չլինել, որի պատճառով էլ տղամարդու և կնոջ սեռական օրգանները տաբուացվում են: Թերևս այդպես է գրեթե բոլոր լեզուներում, այդ թվում անգլերենում և հայերենում:

գ) սեռական կյանքին վերաբերող տաբուներ. անգլերենն ունի տաբուների որոշակի խումբ, որն ուղղակիորեն կապված է սեռական կապի և գործողության, սեռական հարաբերությունների հետ: Գրեթե բոլոր լեզուներում բնական երևույթ է այսպիսի տաբուների տարբերակումը, քանի որ սեռական կյանքը և դրա հետ կապված գործողությունների հրապարակումն արգելված է և հրապարակման ենթակա չէ: Հասարակության ստեղծած ու մշակած քաղաքակրթական համակարգն ու մշակութային կենսակերպը չի խրախուսում ու հանդուրժում սեռական կյանքի հետ կապված մանրամասները վերարտադրող բառամիավորների հանրայնացումը: Հենց այս պատճառով էլ այդ բառերը ցանկացած լեզվում դառնում են տաբու: Նմանատիպ միավորների գործածումը խոսքում պայմանավորված է մարդկանց հուզական աշխարհով, դաստիարակությամբ, կրթական ցենզով, ինչպես նաև՝ ստեղծված իրավիճակով (սովորաբար արտահայտվում են լեզվակոդիվների, վեճերի, ատելության խոսքի դրսևորումներում): Այս խմբի տաբուները մարդկանց գիտակցության մեջ արթնացնում են զգոնություն, սթափություն, ամոթ: Անգլերենում առկա են այս տիպի տասնհինգ տաբու՝ *ball* (սեռական կապ ունենալ), *bugger* (անալ սեռական հարաբերություն ունենալ), *buggery* (անալ սեքս), *fuck* (սեքսի գործընթացը), *fuck* (սեքսով զբաղվել որևէ մեկի հետ), *handjob* (ծոնաշարժություն), *hump* (ինչ-որ մեկի հետ սեռական հարաբերություններ ունենալ), *screw* (1. սեռական ակտ, 2. սեռական հարաբերության ընկեր), *shag* (սեռական ակտ ինչ-որ մեկի հետ), *spunk* (տե՛ս *semen*, տղամարդկանց և արու կենդանիների սերմնահեղուկը), *stiffy* (առնանդամի ակտիվացումը), *roger* (սեռական հարաբերություն ունենալ ինչ-որ մեկի

հետ), *root* (տե՛ս *u roger*), *toss*, *toss off* (սեռական հաճույք ձեռնաշարժության միջոցով), *wank* (ձեռնաշարժություն անել): Ակնհայտ է, որ այս խմբում ներառված բառամիավորները սերտ կապ ունեն սեռական ակտի հետ: Մյուս խմբերում դրանք չենք ներառել, քանի որ դրանց իմաստային յուրահատկությունները լավագույնս տեսանելի են իմաստաթեմատիկ սույն խմբում:

է) տարաբնույթ որակական գործողություններ, ընթացք, շարժարտահայտող տաբուներ. իմաստաթեմատիկ այս խմբում ընգրկված են մեծ քանակությամբ այնպիսի տաբուներ, որոնք բովանդակում են հատկանշային ու որակական գործողություններ՝ վերագրելով դրանք օբյեկտին: Այդ գործողությունները բնութագրում են վատ ու անբարո քայլ, նսեմ ու տգեղ արարք, տկարություն, խաբեություն՝ *arse* (չցանկանալ որևէ բան անել, քանի որ դա շատ դժվար է), *arse about* (հիմարաբար ժամանակ վատնել), *balls up* (ապականել, փչացնել), *bugger* (փչացնել, ավիրել), *bugger off* (հաճախ օգտագործվում է որպես կարգադրություն՝ հեռանալ), *bugger up* (ինչ-որ բանը վատ անել կամ փչացնել), *bugger about/around* (1. ժամանակ վատնել հիմար պահվածքով կամ առանց որոշակի նպատակի, 2. ինչ-որ մեկի հետ վարվել այնպես, որը մտածված ձևով վնասում է նրանց կամ վատնում նրանց ժամանակը), *bull-shit* (ասել բաներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, հատկապես մեկին խաբելու համար), *butt* (տե՛ս *u bust your butt/chops/hump/ass*, չարչարվել, ջանք գործադրել, ճգնել), *crap* (արտաթորել, կղկղել, կեղտոտել), *eff off* (կոպտորեն մեկին ասել՝ հեռացի՛ր. գործածվում է *fuck off*-ի փոխարեն), *piss* (1. զուգարան գնալու ավելի նուրբ այտահայտվելու ձև, բրիտանական անգլերեն, 2. գնալ զուգարան/բաղնիք, ամերիկյան անգլերեն), 3. պարզապես գնալ, ամերիկյան անգլերեն, բրիտանական անգլերեն), *scare* (տե՛ս *u scare the shit out of somebody*, *scare somebody shitless*, ուժգին վախեցնել մեկին), *shit* (արտաթորել, կղկղել, կեղտոտել), *sod off* (հեռանալ):

ը) պետական-վարչական հարաբերություններին, քաղաքականությանը ու դրանց առնչություններին վերաբերող տաբուներ. այսպիսի իմաստաթեմատիկ խմբի առանձնացումը կարևոր է: Կան սակավաթիվ տաբուացված բառամիավորներ, որոնք արտահայտում են պետական ու վարչական հարաբերություններ, սոցիալական կյանք, հասարակական նիստուկաց և այլն, այն է՝ *arse-licking/ass-licking* (ցուցաբերել իշխանահաճո պահվածք, պատրաստ լինել անել ամեն ինչ անել ղեկավար մարմիններին հաճոյանալու համար), *ass-licker* (իշխանամետ, իշխանահաճո անձ), *savage* (1. վիրավորական բառ՝ ուղղված մարդկանց այնպիսի խմբերին կամ սովորություններին, որոնք պարզունակ են և թերզարգացած, 2. դաժան եւ բիրտ մարդ): Պատահական չէ այսպիսի միավորների տաբու իմաստով գործածությունն անգլերենում. հասարակական հարաբերությունները գրեթե միշտ բարդ են, հասարակական խավերը բոլոր

Ժամանակներում տարբեր գործառույթներ են իրականացրել ու պայքարել իրար դեմ: Անգլիայում թագավորական ընտանիքը, իշխանությունները և խորհրդարանը միշտ գտնվել են հասարակության ուշադրության կենտրոնում, հետևապես այդ բարդ հարաբերությունների թնջուկում սովորական բառերի տաբու դառնալն անխուսափելի է դառնում:

թ) իրադրական տաբուներ. անգլերենը հարուստ է մարդկային, սոցիալական, դասակարգային հարաբերություններին վերաբերող տաբուներով, որոնք մարդկային առօրեական հարաբերություններ արտահայտող բառ-հասկացություններ են: Սովորաբար դրանք առնչվում են ամենօրյա կյանքին, կենցաղին և իրադրական բնույթի շնորհիվ բացահայտում են մարդկային բնավորության գծերը, դրական ու բացասական կողմերը՝ *bollocking* (բնութագրում է իրավիճակ, որտեղ մեկը բարկանում է մեկ ուրիշի վրա, նույնիսկ՝ բղավում), *buggered* (դարձվածք բրիտանական անգլերենում, որն օգտագործվում է այն դեպքում, երբ մեկն անտեղյակ է ինչ-որ բանից կամ հրաժարվում է անել ինչ-որ բան), *the fuck* (օգտագործվում է զայրույթ, ապշանք կամ զարմանք ներկայացնելու համար), *hump* (*bust your hump*, մեծ ջանքեր գործադրել ինչ-որ բան անելու համար), *jack shit* (մի փոքր կամ ոչ մի բան), *piece* (*a piece of piss*, մի բան, որ շատ հեշտ է անել), *piss-up* (չափից շատ ալկոհոլ օգտագործել), *piss-take* (կատակ, որը միտված է ինչ-որ մեկին, ինչ-որ բան ծիծաղի առարկա դարձնելուն), *piss-poor* (հիմնական կարիքների համար չունենալ բավականաչափ գումար, լինել աղքատ), *shit* (շատ վատ), *sod* (դժվարություն կամ խնդիրներ առաջացնող մի բան), *wanker* (վիրավորական բառ, որն օգտագործվում է որեւէ մեկին վիրավորելու համար, հատկապես տղամարդկանց նկատմամբ զայրույթ կամ ցատում արտահայտելու համար), *turd* (վիրավորական բառ՝ ուղղված տհաճ մարդուն): Կարևոր է, որ այս խմբի տաբուները մեծ մասամբ գոյականներ են, որոնցում գործողության, ընթացքի գաղափարն առաջնային է:

ժ) հատկանիշ, որակ, քանակ, մտավոր կարողություններ, նմանություն արտահայտող տաբուներ. անգլերենն առատ չէ այս խմբին վերաբերող տաբուներով: Դրանք հիմնականում մարդու մտավոր կարողություններն ու բարոյական ընդունակություններն են արտացոլում՝ բնութագրելով մարդկանց վարքագիծը, բնավորությունը, աշխարհայացքը, հասարակության մեջ ունեցած դիրքը: Եղած միավորներն են՝ *arsehole/asshole* (հիմար, տհաճ մարդ), *arselicker* (քծնող, հայերեն փոխարժեքը՝ *հեղև մսնոր*), *ass* (հիմար, տհաս), *balls-out* (վճռական, ծայրահեղական), *bastard* (բնութագրում է դաժանաբարո, տհաճ մարդուն), *buggered* (1. շատ հոգնած, 2. հոգնած ու ջարդված), *crap* (վատ, շատ վատ որակի), *dumb-ass* (հիմար), *dickhead* (շատ վիրավորական բառ, հատկապես հիմար թվացող տղամարդկանց համար), *gobshite* (հիմար

մարդ, որը անհեթեթություններ է խոսում), *sod* (օգտագործվում է նյարդայնացնող և տհաճ մարդկանց մասին խոսելիս), *piss-poor* (շատ ցածր մակարդակ):

Ժա) վերացական հարաբերություններ արտահայտող տաբուներ. այս տաբուները խիստ բացասական իմաստով գործածվում են մարդկային հարաբերությունները բնութագրելու համար, այն է՝ *balls* (աբսուրդ, անհեթեթություն), *bugger all* (բացարձակապես ոչինչ), *bull-shit* (անհեթեթություն), *crap* (աբսուրդ, անհեթեթություն): Հետաքրքիր է, որ, ինչպես փաստերն են ցույց տալիս, անգլերենում կենդանանուններով գործառու տաբուներ չկան: Որպես բացառություն *bull-shit* գոյականը ոչ ֆորմալ առումով գործառու է *ցուլ* կենդանվան նշանակությամբ:

Ժբ) նյութին (հեղուկ, արտաթորանք) առնչվող տաբուներ. այս իմաստաթեմատիկ խմբում ընդգրկվում են մեկ տասնյակի սահմանը չհատող բառամիավորներ, այն է՝ *BS* (բառացիորեն ցլի թրիք. տաբու իմաստը՝ քաք, կղանք), *crock* (*a crock of shit*, սուտ մի բան), *piss* (մեզ), *piss artist* (անձ, որը շատ ալկոհոլային խմիչք է օգտագործում, հիմար վարքագծով մարդ), *turd* (թրիք), *shit* (արտաթորանք, կղկղանք): Այս բառամիավորների համար տաբու իմաստներն առաջնային իմաստներ չեն, այլ երկրորդական: Առաջնային իմաստներն ունեն սովորական գործածություն, իսկ տաբու իմաստով գործածության հիմքում ընկած են դրանց որակական հատկանիշները, որոնք և հիմք են դառնում այդ միավորների տաբուացմանը:

Ժգ) զարմանք արտահայտող տաբուներ. ինչպես փաստերն են ցույց տալիս, այս իմաստաթեմատիկ խմբի երկու բառամիավոր տաբուացվել են նաև խոսքիմասային անցման հետևանքով՝ *buggered* (կիրառվում է զարմանք արտահայտելիս), *Christ* (բացականչություն, հայիոյական բառ, որը շատերը համարում են վիրավորական, օգտագործվում է զայրույթ, զարմանք կամ ապշանք ցույց տալու համար)², *shite* (տե՛ս *shit*):

Անգլերենում կան տասնչորս տաբուներ, որոնք բազմիմաստ են հենց տաբու նշանակությամբ, հետևաբար բաշխվում են մեկից ավելի իմաստաթեմատիկ խմբերում: Սա օրինաչափ երևույթ է, քանի որ անգլերենը բազմիմաստ լեզու է և իմաստի տեսանկյունից երկարժեք տաբուների գոյությունը սովորական պետք է համարել: Այդ տաբուները բացի ընդհանուր դասակարգման տարբեր խմբերում զետեղելուց հարկ ենք համարում ներկայացնել նաև միասնաբար, որն էլ ավելի տեսանելի կդարձնի դրանց իմաստային տարբերակվածությունը՝ *arsehole/asshole* (1. հետանցք, 2. հիմար, տհաճ մարդ), *ass* (1. հետույք, նստատեղ, 2. հիմար, տհաս), *balls* (1. աբսուրդ, անհեթեթություն, 2. ամորձիներ), *bugger* (1. օգտագործվում է որպես հայիոյանք, երբ մեկը նյարդայնանում է ինչ-որ բանի պատճառով կամ ցույց է տալիս, որ բացարձակապես հետաքրքրված չէ ինչ-որ բանով, 2. վիրավորական բառ, հիմնականում օգտագործվում է տղամարդկանց համար, ցույց է տալիս զայրույթ և

հակակրանք, 3. անալ սեռական հարաբերություն ունենալ), *buggered* (1. շատ հոգնած, 2. հոգնած ու ջարդված, 3. կիրառվում է զարմանք արտահայտելիս, 4. բրիտանական անգլերենում օգտագործվում է չիմացություն կամ հրաժարում արտահայտելու համար), *bugger about/around* (1. ժամանակ վատնելու հիմար պահվածքով կամ առանց որոշակի նպատակի ինչ-որ բան անել, 2. ինչ-որ մեկի հետ վարվել այնպես, որը մտածված վնաս է տալիս կամ վատնում նրա ժամանակը), *crap* (1. արքայի, անհեթեթություն, 2. կղկղել, կեղտոտել, 3. վատ, շատ վատ որակի, 4. շատ վատ), *cunt* (1. կնոջ հեշտոցը և արտաքին սեռական օրգանները, 2. վիրավորական բառ ուղղված որևէ մեկին վիրավորելուն կամ հակակրանք արտահայտելուն), *piss-poor* (1. շատ ցածր մակարդակ, 2. հիմնական կարիքների համար չունենալ բավականաչափ գումար, լինել աղքատ), *prick* (1. առնանդամ, 2. հիմար կամ տհաճ մարդուն ուղղված վիրավորական բառ), *screw* (1. սեռական ակտ, 2. սեռական հարաբերության ընկեր), *sod* (1. օգտագործվում է նյարդայնացնող և տհաճ մարդկանց մասին խոսելիս, 2. դժվարություն կամ խնդիրներ առաջացնող մի բան), *wog* (1. բրիտանական անգլերեն, խիստ վիրավորական բառ սպիտակ մաշկ չունեցող մարդու համար), 2. ավստրալական անգլերենում վիրավորական բառ՝ ուղղված հարավեվրոպական ծագման մարդկանց կամ նրանց, որոնց ծնողները եկել են Հարավային Եվրոպայից), *shit* (1. հայիոյանք, որը համարվում է խիստ վիրավորական. բառը վկայում է, որ այն օգտագործողը զայրացած ու նյարդայնացած է, 2. արտաթորել, կղկղել, կեղտոտել, 3. շատ վատ, 4. արտաթորանք, կղկղանք):

Այսպիսով, մենք տարբերակում ենք տաբուների տասներեք իմաստաթեմատիկ խումբ: Խմբերի առանձնացումը պայմանավորված է տաբուների իմաստային և թեմատիկ յուրահատկություններով.

1. **կրոնական տաբուներ** (4 միավոր),
2. **ռասսայականությանը, ռասսիզմին և ազգային խտրականությանը վերաբերող տաբուներ** (24 միավոր),
3. **հայիոյանք արտահայտող տաբուներ** (6 միավոր),
4. **վիրավորական տաբուներ** (21 միավոր),
5. **մարմնանուններին/սեռական օրգաններին վերաբերող տաբուներ** (19 միավոր),
6. **սեռական կյանքին վերաբերող տաբուներ** (15 միավոր),
7. **տարաբնույթ որակական գործողություններ, ընթացք, շարժ արտահայտող տաբուներ** (16 միավոր),
8. **պետական-վարչական հարաբերություններին, քաղաքականությանը ու դրանց առնչություններին վերաբերող տաբուներ** (4 միավոր),
9. **իրադրական տաբուներ** (13 միավոր),

- 10. հատկանիշ, որակ, քանակ, մտավոր կարողություններ, նմանություն արտահայտող տաբուներ (14 միավոր),
- 11. վերացական հարաբերություններ արտահայտող տաբուներ (4 միավոր),
- 12. նյութին (հեղուկ, արտաթորանք) առնչվող տաբուներ (6 միավոր),
- 13. զարմանք արտահայտող տաբուներ (3 միավոր):

Կատարված հետազոտության վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ մեծ թիվ են կազմում ռասսայականությանը, վիրավորանքին, մարմնանուններին, սեռական կապին և տարաբնույթ որակական գործողություններին առնչվող իմաստաթեմատիկ խմբերում զետեղված բառամիավորները: Մնացած խմբերում զետեղված միավորներն ավելի քիչ են ու սահմանափակ: Տաբուների այսպիսի բաշխվածությունն արտացոլում է օբյեկտիվ իրականության և բնության ու մարդկային հարաբերությունների կապը:

Որպես ամփոփում՝ նշենք, որ անզլերենի տաբուների մեծ մասն ունեն իրենց հայերեն համարժեքները, որոնք սույն հոդվածում չեն դիտարկվել. դրանց հիշատակումն ինքնին տաբու է մեր լեզվում, իսկ անզլերենի տաբուները հնարավոր է հնչեցնել, քանի որ մեր լեզվամտածողության մեջ դրանք ֆիքսված չեն որպես արգելաբառեր: Նույն կերպ օտար լեզվի սովորական գործածություն ունեցող բառը, որը հնչյունական կազմով նման է հայերենի ինչ-որ տաբուի, դժվար է արտաբերել հայերենով, քանի որ այդ դեպքում որոշակի նյարդաբանական դժվարություն է առաջանում³:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի դեպ, քննության չենք ենթարկել նաև հիվանդությունների տարաբնույթ անվանումները, քանի որ դրանք իրենց լեզվական նախնական իմաստներով բժշկական տերմիններ են: Օրինակ՝ *քաղցկեղ*, *գիժ* և նմանատիպ այլ բառերի գործածությունները տվյալ հիվանդություններով տառապող մարդկանց մոտ գործածելն արգելվում է և չի խրախուսվում: Դրանք կարող են լինել իրավիճակային, կոնտեքստային, դիպվածային տաբուներ:

2. Խոսքը Աստծո միաձին որդու՝ Հիսուս Քրիստոսի անվանն է վերաբերում, որի՝ որպես բացականչության տաբուացման հիմքում, չենք բացառում, կարող են լինել կրոնական ու նախապաշարմունքային ենթատեքստեր:

3. Այդպիսի օրինակ է ռուսերենի *сop* (գող) բառը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1987:
2. Աճառյան Հ. Հայոց լեզվի պատմություն, առաջին մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 1940:
3. Պողոսյան Ա. Տարուի լեզվամշակութային արժեքը և նրա առաջացման ուղիները // *Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում*, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:
4. Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1989:
5. Զահուկյան Գ. Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 1960:
6. Զահուկյան Գ. Լեզվաբանության պատմություն, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., հ. 2, 1962:
7. Զահուկյան Գ. Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1987:
8. Allan K., Burrige K. *Forbidden Words Taboo and the Censoring of Language*. Cambridge University Press, 2006.
9. Bajáková G. *Taboos and Cultural Specifics of Indigenous Peoples in Australia and America (Bachelor's Diploma Thesis)*. Masaryk University Faculty of Arts, Department of English and American Studies, 2013.
10. Buck C. D. *A Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages*, Chicago & London, 1988.
11. Dickens A. G. *The English Reformation, Second Edition*. The Pennsylvania State University Press, 1992.
12. *Dirty Word Search Book for Adults: Over 50 Naughty and Lewd Word Search Puzzles – The Perfect Stocking Stuffer for Men*, 2017.
13. Fägersten K. B. *Who's Swearing Now? The Social Aspects of Conversational Swearing*. Newcastle: Cambridge Scholars Publishing, 2012.
14. Fakuade G., Kemdirim N., Nnaji I., Nwosu F. *Taboo in the Igbo Society // A Sociolinguistic Investigation, Language Discourse, and Society*, 2 (2), International Sociological Association, Language and Society, 2014.
15. Gao C. *A Sociolinguistic Study of English Taboo Language // Theory and Practice in Language Studies*, Vol. 3, No. 12. Finland: Academy Publisher, 2013.
16. Hughes G., *An Encyclopedia of Swearing: The Social History of Oaths, Profanity, Foul Language, and Ethnic Slurs in the English-speaking World*, Armonk, New York, London, England, 2006.
17. Ginzburg R. S., Khidekel S. S., Knyazeva G. Y., Sankin A. A. *A course in Modern English Lexicology*. Moscow: Vysšaja škola, 1979.
18. Jay T., Janschewitz K. *The Pragmatics of Swearing // Journal of Politeness Research*, 4, 2008.

19. Ljung M. Swearing: A Cross-Cultural Linguistic Study. Sweden: University of Stockholm, 2011.
20. Online Dictionary by Merriam-Webster: America's most-trusted online dictionary // URL: <https://www.merriam-webster.com/> (Retrieved March 31, 2018),
21. Cambridge Advanced Learner's Dictionary // URL: <https://dictionary.cambridge.org/> (Retrieved March 31, 2018),
22. Online Etymology Dictionary//URL:<https://www.etymonline.com>.
23. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, International Student's Edition, A. S. Hornby, Seventh edition, Oxford University Press, 2005.

Ա. ПОГОСЯН – К вопросу о классификации смысло-тематических групп слов табу в английском языке. – Исследования показывают, что слова табу в словарном составе языка занимают важное место и основой их смыслового различия являются многочисленные языковые и внеязыковые факторы. В данной статье на основе классификации 136 слов табу английского языка, взятых из седьмого издания словаря “Oxford Advanced Learner’s Dictionary” (2005), выделены 13 смысло-тематических групп слов табу, которые отражают данные других классификаций и делают данную классификацию целостной.

Ключевые слова: социолингвистика, словарный запас, смысловая и тематическая группа, табу, жаргон, ругательство, словарный состав, значение слова, словарь

A. POGHOSYAN – The Classification of Semio-thematic Groups of Taboo Words in English. – The paper is an attempt to classify taboo words which occupy their important place in the vocabulary system of the language. A number of linguistic and extra-linguistic factors serve as a basis for the semantic differentiation of English taboo words. Our classification of English taboo words is based on 136 words found in the “Oxford Advanced Learner’s Dictionary” (2005). Thirteen semantic groups have been revealed which not only reflect the data of other researchers, but are also more complete and important from the point of view of differentiation boundaries.

Key words: sociolinguistics, vocabulary, semantic and thematic group, taboo, slang, swear words, word stock, word meaning, dictionary

Ներկայացվել է՝ 11.06.2019
Երաշխավորվել է ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 20.11.2019